ազատորեն օգտվելու համար։ Նրանց գերդաստանների կազմի վրա էլ անդրադառնում էր ռուսական տիրապետության հաստատվելուց հետո առհասարակ Անդրկովկասի բոլոր գավառներում նշմարվող բնական արագ աճը։ Այդ աճի տեմպի մասին տեղեկություններ ունենք Փարսադանյանների մելիքական տան համար։ Իրենց տոհմը ռուսական ազնվականության ցուցակի մեջ գրանցելու նպատակով նրանք ներկայացրել էին կառավարությանը իրենց տոհմի ճյուղագրական ծառը։ «Աճանան-քարխանեցի Մելիք Փարսադանյան» տունը, այն ժամանակ, երբ Մելիք Հովհաննեսը վախենալով մելիքության մոտալուտ վերացումից (40-ական թթ.), շտապել էր իր որդի Գալուստին բազմեցնել մելիքական աթոռին։ Այդ Գալուստից և նրա Կարապետ ու Հայրապետ եղբայրներից[40] առաջացած սերունդը 80-ական թթ. ուներ 11 ներկայացուցիչ։ Այդ միջոցին մյուս կողմնակի ճյուղերը այնքան էին բազմացել, որ տունը՝ չկարողանալով իր անդամների մեջ բաժանել այլ հողերի պես նաև Հալիձորի պղնձի հանքավայրերը, այդ հանքավայրերից ստացած եկամուտը բաժանում էր մասնակից ազգականների մեջ 96 զարի-ների՝ փայերի։ 1886 թվի մարդահամարը տալիս է հետևյալ թվերը Զանգեզուրի ազնվականության մասին։ Իրենց ազնվական ծագումը պաշտոնապես ապացուցած թե՛ հայ և թե՛ թուրք անձանց թիվը 2.122 էր, որոնցից մելիքական ծագում ունեցողները 499 տղամարդ, 404 կին, ընդամենը 903 անձ, բեգերինը՝ 715 տղամարդ և 504 կին, ընդամենը 1219 անձ[41], նրանք կազմում էին բնակչության 3 տոկոսը։ Այդ աճի հետևանքն այն էր, որ ազնվական ընտանիքի յուրաքանչյուր անդամին բաժին էր ընկնում սերունդից սերունդ ավելի փոքրացող հողամաս, որի եկամուտով նա արդեն չէր կարողանում բավարարել հետզհետե աճող պահանջները։ Իր հողից ստացած ռենտան նրան այլևս չէր ապրեցնում։ Հարկադրված լինելով եկամուտի այլ աղբյուրների դիմելու՝ նա կամ դադարում էր անձամբ շահագործելուց իր կալվածքը և տալիս էր ուրիշին շահագործելու կապալով կամ այլ պայմանով կամ վաճառում էր իր հողերը, այգիները, անտառամասերը։ Այսպիսով հեղափոխության նախօրյակին արդեն վաճառված էին նոր հարստացող դրամատերերին և ավելի հաճախ գյուղական համայնքներին Հայկազյան, Սաֆրազբեկյան, Հյուսեյնյան՝ մելիքական տոհմերի հողերի, այգիների, հանքավայրերի բավական նշանավոր մասերը։

Կալվածատեր-ազնվականությունը իր անդամների մի խոշոր տոկոսով XX դ. սկզբներին արդեն հեռացած էր գավառից, և առաջին հերթին հայ մելիքական-բեգական տոհմերը։ Զանգեզուրի ազնվականությունը չստացավ այն դասակարգային կազմակերպվածությունը, որը ներքին ռուսական նահանգների օրինակով տարածվել էր Անդրկովկասում միայն Տփղիսի և Քութաիսիի ազնվականության վրա և որը մեծ հնարավորություններ էր ընձեռում ազնվականության կողմից ընտրված պատգամավորական մարմինների միջոցով ազնվականության միասնությունը պաշտպանելու, իր անդամների կալվածատիրությունն ամրացնելու, նյութական վիճակը բարելավելու և դրանով շատ ակտիվ դեր խաղալու այդ նահանգների հասարակական խնդիրների լուծման մեջ։ Զանգեզուրի մելիքները և բեգերը չունեցան իրենց ընտրական մարմինները և նոր ձևավորվող կապիտալիստական կարգերի մեջ նրանք շատ

---

40 Տե՛ս կցվող ճյուղագրությունը։

41 Սրանց հողերի վրա ապրում էր 21.557 գյուղացի, կամ այն ժամանակվա բնակչության 31%։